

Չ "ՈՒՂՈՒՄ-ՈՒՆԸ" ԿՒՔԻՑ

1922

Երբ

Դուք

Արնոտած շրթունք ու բերան

Գիտեք լուկ դառնորեն ոռնալ—

Ես արև՛ը բերի հուրհրան,

Որ շինեմ խնդուիթյան զուռնա...



Արևի նարնջե ֆոնին
Տեսնո՞ւմ եք
Դուք
Թեք—
Երկաթե պրոֆիլը իմ...

Ի՞նչ է՝
Սովո՞ր էիք
Կոպեկնոց դրամի վրա
Արքայի դեմք տեսնել...
Հիմա ե՛ս եմ՝
«Որդի բանվորի»—
Իմ դեմքն է հիմա հուրհրան
Քանդակվել արևին լուսե:

Ի՞նչ է՝
Մթամած նաշերում ձեր թեն
Վահրե՞ց ձեր հոգին հաղթական—
Երբ տեսաք իմ դեմքը երկաթե՝
Արևի ֆոնին քանդակած...

Գ Յ Ո Ւ Մ Ր Ի

Սիրելի Արտաշես Տեր-Մարտիրոսյանքն,
գյումրեցի պոետին

I

Դեռ երգում է այստեղ զուռնան,
Դեռ դճուր սիրտ է հուզում:
Թող հոգիդ դառնորեն ոռնա—
Միևնույնն է՝ կմեռնի անլեզու:

Օ, զուռնա՛, զուռնա՛, զուռնա՛...
Տխրություն:

Թախիժ դեղին:

Օրերը ցնորք կդառնան,

Աշխարհը—անդուռ փակուղի:

Ստվերի պես կանցնես անհետ,

Ստվերի պես կյանքդ կմարի,

Ու, մռայլ, կխնդա մահիդ—

Գյումրին...

II

Դու մի օր կանցնես այստեղից:

Կուղեկցե քեզ երգը զուռնայի:

Ու Գյումրին, գորշ, դեղին,

Անտարբեր, մռայլ կնայի:

Դու կանցնես հարբած ու անտարբեր,

Քայլերով տարտամ, անիմաստ:

Բուլվարը մշուշ կպատե,

Կժպտա «Ապոլլո» սինեման:

Ու, ծուլլ, աչքերի տակով
Կհնգնն գյումրեցի վաղոն
Օրերիդ ցուրը վարդագույն,
Որ կորավ կյանքիդ դագաղում:

Առավոտ կընկնես կիսամեռ,
Կկանգնի սիրտդ հանկարծ:
Իսկ Գյումրին դեռ օղի կքամե,
Ու էլի զվարթ կզնգա:

Հոկ երգեքդ շների նման
Ետևիցդ երկա՛ր կոռնան,
Ու վրադ պատարագ կանե—
Զուռնան...

Ս Ր Ի Ն Գ Ը

Սրինգը,
Կույր ու ծեր,
Անցնում էր փողոցով:
Սրինգը երգ էր պուցե.
Ելնում էր դեպի վեր,
Իջնում էր կոր գծով:

Իջնում էր—
Ետ էր դառնում.
Հասնում էր աստղերի ծերին,—
Ու նորից, որպես վաշխառու,
Աշխարհում փնտրում էր—ի՞նչ...

Աստաֆյանի միջով
Անցնում էր երգը սրինգի,
Ծեծում էր դռները շոր:
Դռների ետևում
Մարդիկ
Ուզում էին «Ռանգի»,
Ուզում էին—«Տասշորս»:

Մնում էր—
Դռների առաջ:
Դառնացած, որ չեն թողնում ներս:
Եվ նորից, որպես մասխարա—
Թռչում էր կոր գծով—
Վեր...

Ի՞նչ խղճուկ էր այդ ծեր վանեցին...
Այդ երգը, երգը սրինգի...
Այդ երգը՝ աստղային, անծի՛ր...
Այդ երգը—անօգ, անգին...

Քեզ խրատ, պոետ, այստեղից.
Օ, երբե՛ք շերգես անտեղի:

Լավ է — կորչե՛ս անհետ,
Լավ է — մա՛հը դեղին:

Օ, լավ է կոտորես հանգիստ
Սրինգըղ, որպես թևեր, —
Միայն թե, պոե՛տ, կյանքից
Սրինգի պես վեր չթևես...

Ը Ն Կ Ե Ր

Հիշում եմ մազերդ գանգուր,
Դեմքդ՝ փողոցի պես փռշուտ,
Միծաղդ՝ զվարթ Զանգու,
Եվ աչքերդ՝ վառ ու խռշոր:

Հիշում եմ, հիշում եմ, Կարո,
Հիշում եմ, թե ինչպես քեզ հետ—
Հիշում ես՝ աղբի տակառում
Հավաքում էինք թուղթ ու գազեթ:

Հավաքում էինք մենք լուցկու
Նոր տուփեր, կլեպներ սեխթ—
Ու խաղում էր մեր կապույտ հոգում
Արևի լույսը դեղին:

Հիշում եմ, թե ինչպես հաճախ,
Կառքերի ետևին կպած,
Մանկական խնդությամբ մի շար
Մենք թռչում էինք Հինդ ու Հաբաշ...

Եվ ահա մի օր այդպես
Երբ թռչում էինք մենք սրբնթաց—
Կառապանը մտրակով շաշեց
Եվ դու պոկվեցիր ու ընկար...

Ու հիշում եմ... դեմքդ հողագույն,
Ուղեղդ՝ գորշ, մխրճած...
Հետո հայրս մուխ սենյակում
Մինչև լույս ինձ խփեց ու փնչաց:

Մինչև լույս թքեց դեմքիս,
Մինչև լույս հայհոյեց կատաղի,—
Ու նայում էիր դառը դու ինձ
Քո հեռու, մութ դագաղից...

Բայց հիմա ինչքա՛ն է փոխվել
Այն օրից աշխարհը — գիտե՞ս...
Ինչպես մի մարդ անտրեխ
Վերցնի դառնա կառքի տեր...

Արդյոք դու իմացե՞լ ես, Կարո,
Որ ընկերդ հիմա այն բոբիկ
Եվ ուրիշ ընկերներ բյուրավոր
Պալատները կապել են թոփի...

Ախ, սիրտս, Կարո՛, մի բազե,
Թպրտում է՝ վահրով լեցուն:
Եթե այս երգս լսես—
Քացիով տո՛ւր աստծուն:—

Թող թռչի ամպերից նա վար,
Հետույքով զարնվի թող հողին...

Ես հիմա եկել եմ Մոսկվա,
Ես հիմա պոետ եմ հաղթողի...



Օրերի
Շեկ
Վիտրինում
Դրել եմ սիրտս հրե:
Տալիս եմ մի բաժակ զինու:
Ուզո՞ւմ եք.
Տամ,
— Առե՛ք:

Ինչի՞ս է
Հիմա
Հարկավոր
էդ կակուղ Կիկոն մասխարա...
Թող լինի—թիթեղե երգեհոն,
Թող լինի—զուռնա-նաղարա՛:

էնպես որ՝
Աչքերից ձեր շար
Զողղա,
Զլա,
Զմաշի.—
էնպես որ՝ ցավի՛ց չճչա—
Երբ կգաք
Դուք
Թամաշի...

Ե Ր Ե Վ Ա Ն

I

Ինչ որ չի, չի երազել
Դեռ ո՛չ մի պոետ—աստղաբիբ,
Ուզո՞ւմ եք՝ որպես գնդասեղ
Արև՛ը խրեմ՝ փողկապիս:
Առնեմ, որպես սինի,
Երկինքը աստղերի խաղով—
Ու տանե՛մ այն հարսանիք,
Որպես միրգ՝ մի ճուֆ խաղող:
Ինձ համար ի՞նչ կա, որ չկա.
Կանե՛մ, ինչ որ կամքս ջոկի:
Ուզո՞ւմ եք՝ դարձնեմ «Չեկա»
Թաղանթի պես քնքուշ հոգիս...

II

Ես ոչի՛նչ, ոչի՛նչ չգիտեմ:

Բայց կարող եմ ես, պոետ,
Երգերիս մատներով երկաթե
Չեր կակուղ սրտերը շոյել:
Կարող եմ, եթե սիրտս ուզե,
Կտրելով վերստեր անթիվ,
Երկարել դեպի սիրտը ձեր
Տողերիս լուսե գերանդին:
Ես կարող եմ, որպես նետաղեղ,
Թե կուզեք՝ ե՛րգս թեքել
Եվ թողնել, որ նա, հոտավետ,
Չեր դեմքին երազներ թքե...

Քայց ի՞նչ,
Ի՞նչ դրանից...
Միկնույնն է՝ սրտիս կիջնի
Չանձրույթը, որպես գրանիտ
Ու թախիծը՝ պաղ ու դժնի:

Օ, գիտեմ, որ սիրտս հետո,
Որպես հին մի, բեկված Թերսիդես—
Իր թունոտ բողոքի նետով
Չարկելու է թե ինձ, թե ձեզ...

III

Քայց էլ ի՞նչ, էլ ի՞նչ ես ուզում,
Անհատնում սի՛րտ իմ երգահան...

Գրաստի նման անլեզու
Քնել է Երևանն ահա:
Գլուխը դրած Քանաքեռ՝
Ոտքերը Մասիս է երկարել:

Երևա՛ն, ես սիրում եմ քեզ,
Գորշավազ շենքերդ քարե:

Սիրում եմ տեսքդ գրաստ,
Ինչպես ճորտը սիրում է խանին,
Ինչպես սեգ պարսիկը բարեպաշտ,
Սիրում է մտնել բաղանիք...

Կարո՞ղ է արդյոք նեզրը սև
Հրաշքով սպիտակել հանկարծ:—

Երևա՛ն, ես էլ ի՞նչ ասեմ,
Որ դու ավելին չցանկաս...

IV

Բայց էլի՛, բայց էլի՛, բայց էլի՛,
 Հայացքը մշուշին գամած,
 Կախվում է ուղեղիս թելից
 Երևանը որպես խեղդամահ:

Կախվում է:
 Կախվել է ուզում:
 Չանձրացել եմ, ասում է, կյանքից:

Դու գիտե՞ս, ասում է,— բազում
 Քաղաքներ կան՝ եռուն, անհանգիստ...
 Փայլում են, կոշիկի պես սրբած,
 Նրանք լամպերի լույսից:
 Ավտո՛ է այնտեղ արաբան,
 Փողոցի լապտերը՝ լուսին:
 Շարել են իրենց զիստերին
 Կամուրջները, որպես օղեր...
 Ախ, նրանք— պայծառ, ոսկերիզ,
 Իսկ ես— գաղթական Շողեր...

Հասկանո՞ւմ ես, ասում է, Չարե՛նց,
 Ես ուզում եմ նրանց պե՛ս լինեմ...

Եթե դու պետքակա՛ն ես, պոե՛տ,
 Երգերի տեղ երկրնե՛ր շինե՛:
 Տողերդ կամուրջներ թող լինեն,
 Օղակեն գետերը զնգուն,
 Որ անցնեն հազա՛ր տարիներ
 Եվ հազա՛րն էլ թափվեն Ձանգուն:
 Թե կարող ես— այնպե՛ս արա դու,
 Որ այստեղ... նոր քաղաք բուսնի...

Բայց դու... դեռ նստել ես արթուն
 Եվ նայում ես այդ լիրբ լուսնին...

— Ախ, լուսինն ահա վերևում,
Արախչինն արծաթ մազերին,
Նրբալույս աստղերի քեֆում
Հեզանազ պարում է «էնզելի»...

Իսկ Մասիսը՝ քնում թմրած՝
Երազում տեսնում է ինձ:

.

Ես սիրում եմ քեզ, Երևան,
Ինչպես մեր այն հին հեքիաթում
Դավիթին սիրում էր իրա ձին:

Շ Ո Ք Ե Ք Ա Լ Ո Ւ Ս Տ

Նարից՝ Արտաշէս Տեր-Մարտիրոսյանին.
գլխամրեցի պանտֆն

I

Վստ՞ում է ձեր սիրտը այսօր
Անողորք երգ մի երկաթե
Օրերի մասին այն բոսոր,
Որ գալու են՝ բորբոք ու թեժ...

Ամենո՛ւր, ամենո՛ւր, ամենո՛ւր
Հիմա այդ երգն է անողորք
Պատգամի նման մի անհուն
Շեփորում արևն իր փողով:

Իմ հեռու, խուլ աշխարհից
Ահա ես, հին մի պոետ,
Տեսնում եմ հեռուները հիր,
Որպես նոր մի Ռոբերտ Օուեն:

Հասկանո՞ւմ եք՝ հողմակոծ ու ժխոր
Օրերի գծերով երկաթե
Գնացքի նման մի դղորդ
Մոտենում է Գալիբը թեժ:

Մոտենում է նա, երկաթե, —
Իսկ այստեղ, խանդով անտեղի,
Գլխամրեցի, հարբած մի Ալեք
Դեռ փչում է իր զուռնան դեղին...

II

Դեռ փչում է հին եռանդով
Ալեքը իր զուռնան թմրիչ
Ու լսում է նրա երգն անթով —
Գորշաբար, մոայլ Գլխամրին:

Նրա խուլ նվագին ունկնդիր,
Հնամյա օրերի շախով,
Ելնում է դիմացի խանութից
Ճոճվելով, գյումրեցի Վաղոն:

Բռունցքը արծաթ քամարին
Անցնում է փողոցի մեջտեղից,—
Ու փռում է մռայլ Գյումրին
Նրա դեմ իր թախիժը դեղին...

III

Դեղին

Փողոցները

Չանձրույթ են անձրևում:

Հորանջում են ծուլ ու դեղին:

Ու կանչում է թախիժը հեռու,

Դեպի մութ մի, խավար փակուղի:

Հեռուները՝ խիստ ու խոժոռ,

Կայարանը, որպես զառանցանք:

Ու երգում է զուռնան քոսոտ՝

Չանձրալի, տխուր, միաձայն...

Միթե սա՞ է երկիրը նաիրի,

Միթե սա՞ է, սի՛րտ իմ հիմար:

Միթե չի՞ զգում օրերի

Բոցակեզ շունչը նա հիմա:

Միթե չի՞ զգացել նա դեռ,

Որ արդեն մի հաղթ Մեքենա

Ցնցում է ձեռքով երկաթե

Այս խուղերը խանդով մի անաս:

Ցնցում է ձեռքով անշեղ—

Եվ տիղմի նման անտեղի

Կորչում են կառուցման փոշում

Ալեքն ու իր զուռնան դեղին...

IV

էլ ինչո՞ւ, ինչո՞ւ է նա փշու՞մ.
 Կուրացած՝ շգիտե՞մ միթե նա,
 Որ գալիք հողմերի բոցում
 Հաղթելու է ջերմ Մեքենան:

Չգիտե՞, որ վաղը կրքի
 Ու մահվան երգի փոխարեն
 Պիտի թեժ երկաթը երգի
 Դաշտերում այս խուլ, մոխիրե...:

Ու զուռնի փոխարեն — շոգին,
 Պիտի տաք գոլորշի՛ն ուռչի,
 Եվ նրա էլե՛կտրա-հոգին
 Պիտի տոթ զնգա ու թռչի:

Պիտի գա՛, պիտի գա՛, պիտի գա՛
 Երկաթի հզո՞ր զնգոցով—
 Դեպի մեր խուղերը գորշաքար,
 Դեպի մեր երկիրը քոսոտ:

Նա պարզել է ձեռքը անշեղ,
 Տալիս է զարթնումի նշան:—
 Ես տեսնում եմ դեմքը նրա շեկ
 Եվ աչքերը նրա դրոշակ...:

V

Իսկ դո՞ւ, պոե՛տ Աշնուտի,
 Քո գլուխը ինչո՞ւ ես կքել
 Ու թողել ես, որ մուժը միին
 Մշուշե թե սիրտդ, թե՛ քեզ:

Սի՛րտդ, սի՛րտդ ինչո՞ւ է սև...
 Քե՞ն կտրել է արդեն անթիվ

Գետնահար զոհերի հետ քեզ էլ
Օրերի անդարձ գերանդին...

Օ, մզլած մրզի նման մի
Դու գլուխդ գետինն ես թեքել,
Եվ թողել ես, որ աշնան քամին
Մազերիդ անձրևներ թքի:

Օ, ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ...
Միթե դու Ալե՞քն ես հիմար,
Որ անցած հեռուներն ես տենչում
Մորմոքող սրտով քո հիմա:

Օ, հիմար, խեղճ մասխարա...
Չգիտե՞ս, որ թախիծը ձյունն
Թևերով իր պաղ—անկրակ
Դեպի հինը քեզ չի՞ թոցնե:

Անողոք է երթը Գալիքի
Եվ գիտեմ՝ քե՞զ էլ քրքիջով,
Ինչպես այն հիմար Ալեքին
Պճմլե երկաթը շոր:

Ա Ս Պ Ե Տ Ա Կ Ա Ն

(Ռապսոդիա)

I

Մի հոգնած, տխուր տրուբադուր,
Օրերի գորշ ճամփեքին
Երգում էր հարվածը հատու,
Մահացու հարվածը իր տեգի:
Երգում էր նրանց երգը լուսե,
Մարմինները նրանց ալ-կրակ,
Երգում էր սե՛րը նրանց սև
Ու վերքի արյունն ալվլան:

II

Երգում էր կարոտն իր արթուն,
Երգում էր ամո՛թը այն սև,
Որ կարող է դարձնել մարդուն
Գետնահար ստվեր մի նսեմ:
Իր մռայլ օրերի բանտում,
Աշխարհի գո՛րշ ճամփեքին
Երգում էր հեք մի տրուբադուր
Մահացու հարվածն իր տեգի...

III

«... Հոգնած ու թույլ մի խաշակիր՝
Ես մի օր այն դղյակը մտա.
Ասպետի լաթեր էր հագիս,
Զրահներս՝ ժանգոտած ու թաց:
Ես դառնում էի սուրբ Քաղաքից

Եվ սրտիս թագուհուն նվեր
ես տանում էի ցա՛վը վերքիս
Ու կարոտս՝ բա՛րձր ու վեհ...

IV

Դարբասը շոինդով բացվեց.—
Մի զինվոր էր մառ ու մթին:
— Կտանես ողջո՛ւյնս ձեր վեհ
Ու խիզախ, անհաղթ ասպետին:
Ասացի. ու կրկին փակվեցին
Դարբասները մու՛թ ու մռայլ:
Հոգնած խրխնջում էր իմ ձին
Այն օտար ճամփեքի վրա:

V

Ու նորից մռայլ շոինդով
Բացվեցին դարբասները վեհ...
Եվ ասաց.— Ալֆոնս Անդոն
Չեզ, խոնարհ, խնդրում է վեր:
Ու բռնեց ձիուս սանձից,
Հանեց զրահներս թաց:
Եվ ահա, ես՝ թողած իմ ձին՝
Այն մռայլ զղյակը մտա:

VI

— Ողջո՛ւյն պիլիգրիմ ասպետին.
Չեզ ծառա Ալֆոնս Անդոն:
Ու իջավ գլուխս գետին
Մի անհուն ու խոր եռանդով:
Եվ երբ, շարժումով մի անփուլթ,
Բարձրացրի աչքերս լուռ—
Ես տեսա աչքե՛րը նրա մու՛թ
Ու մորուքը՝ ճերմակ ու սուր:

VII

Մերունի էր Ալֆոնս Անդոն՝
 Իննսուններեք տարեկան...
 Բայց աչքերը՝ շոր ու անթով՝
 Դեռ նայում էին շար ու ազահ:
 Նա կարող էր լինել արքա
 Մավրերի, կամ ցեղին Արաբ,
 Նա կարող էր լինել բռնակալ—
 Ամբողջ աշխարհի վրա:

VIII

Մերունի էր Ալֆոնս Անդոն,
 Բայց իրանը, պիրկ ու խիզախ՝
 Նա պահում էր անմար խանդով
 Բարձրահեռ, որպես սուր մի նիզակ:
 Նա իր կուրծքը պահում էր հաստատ,
 Պղնձե վահանի նման թեք,
 Եվ իր քայլքը՝ բիրտ ու վստահ—
 Նժույզի քայլք էր երկաթե:

IX

— Ընդունե՛ք հարկը դղյակիս
 Որպես ձեր հարկն հարազատ...
 Եվ տվեք մեզ սուրբ Քաղաքի
 Օրհնությունը, իբրև ընծա:—
 Ես նրան դրախտ ցանկացա,
 Ես նրան տվեցի երկու խաչ,—
 Եվ հանկարծ լսեցի երգի ձայն,
 Հնչեցին քնար ու ծնծղա:

X

... Ու մտան երկու գեղանի
 Աղջիկներ՝ հուր-հրեղեն...
 Մոտեցան կլոր սեղանին,
 Դրեցին գավաթներ հողե:

Ու ճկուն շարժումով մի պարե
Իրենց սեգ ողջույնը տվին...
Ուխտավոր, նման մի արև
Մի՛ անգամ թող կյանքդ արևի

XI

Ուխտավոր, մի՛ անգամ կյանքի,
Օրերում տխուր ու մռայլ
Թող ցոլա հրհուր ու անգին
Այդպիսի մի բախտ քո վրա:
Թող բացվի այդպիսի մի լույս
Երկրային կյանքում քո խավար —
Եվ ապա՝ տանջանքին հլու՝
Թող սիրտդ հավիտյա՛ն նվա:

XII

Երկու լույս էին վառ նրանք...
Երկու բոց՝ սպիտակ ու սև,
Երկու խոլ արև հուրհուրան,
Երկու հուր հրաշքներ լուսե...
Մեկի բոյը — սեգ մինարեթ,
Մյուսինը — սև՝ մի սոսի.
Մեկը վառ, պայծառ մի արև,
Մեկը կաթ, արծաթ մի լուսին:

XIII

Բեղվինի խարույկներ էին խոլ
Սևամած աչքերը մեկի,
Մյուսի աչքերը — տխուր
Միրածներ էին անմեկին:
Մեկի կուրծքը մզկի՛թ էր սպիտակ,
Մյուսինը — սե՛գ մի տաճար.
Մեկը բիւ գազե՛լ էր կապուտաչ,
Մեկը հուր նժո՛ւյգ սևաչյա...

XIV

Մեկը թիւ քայլում էր թեթև,
 Թռչկոտում էր, որպես բիլ գազել...
 Մյուսի քայլքն հրաթև—
 Թոխ՛չք էր դաշտերում ավազե...
 Աշխարհում դեռ չի՛ երազել
 Նման բախտ և ո՛չ մի արքա,—
 Բայց այդ վառ բախտին տիրացել է,
 Տիրացել էր Անդոն շարկամ:

XV

Ու հոսում էր հուր-հրահուր,
 Թափվում էր գինին սեղանին:
 Ու տարփում էին բո՛ց մի մահու
 Մարմինները նրանց գեղանի:
 Ու քամում էր գավաթը հողե,
 Ու նայում էր Անդոն շարկամ—
 Կույսերին հո՛ւր-հրեղեն՝
 Աչքերով շա՛ր ու ազահ:

XVI

Ու իջավ, որպես սև գիշեր
 Իմ սրտին թախիծը մռայլ:
 Ու մի ամպ՝ մութ-մշուշե՛ն՝
 Ծանրացավ հոգուս վրա:
 Ու ոռնաց մրրի՛կը իմ հոգում,
 Ուրազանը շաչե՛ց ավազե—
 Մի վա՛գր էր իմ սրտում մորմոքում,
 Վիրավոր էր շա՛ր մի բազե:

XVII

Մոռացել էի արդեն ես
 Իմ սրտի թագուհուն լուսե,
 Որի գեմքը կյանքում հողմածեծ
 Տարինե՛ր էի երազել:

Մոռացա կարոտը իմ վառ,
Մոռացա թագուհուն իմ անգին,
Որի մի՛ հայացքի համար
Ես դարձել էի խաչակիր:

XVIII

— Հանգի՛ստ ասպետիդ վաստակած—
Ու ոտքի ելավ Անդոն:
Մոայլ՝ բարձրացավ ու գնաց,
Հեռացավ, որպես հուշ անթով:
Ու նրա ետևից գնացին
Աղջիկները հո՛ւր-գեղանի...
Փսկ ես... մինչև լույս մնացի՛
Կռթնած կլոր սեղանին:

XIX

Մինչև լույս մնացի կիսաքուն
Կռթնած կլոր սեղանին,
Մինչև լույս պարեցին իմ հոգում
Այն կույսերը հուր-գեղանի:
Մինչև լույս, ինչպես արվլան
Երկու բոց, սպիտակ ու սև՝
Իմ հոգում պարեցին նրանց
Մարմինները լո՛ւյս ու լուսե:

XX

Եվ, ինչպես հավաքվում է քամին
Դաշտերում մառ ավազե,
Կամ ինչպես շար թշնամուն
Մոտենում են քայլերն հովազի,
Կամ ինչպես բեղվինը շարկամ
Հարձակվում է հեովից հանկարծ.—
Մի կարոտ խո՛ր ու ազահ
Իմ հոգում շաշեց ու ընկավ:

XXI

Մինչև լույս աղմկեց իմ հոգում
 Այդ կարոտը, որպես ուրազան,
 Մինչև լույս մոնչաց անքուն
 Այդ կարոտը շա՛ր ու ազահ:
 Մինչև լույս իմ հոգում շաշեց
 Այդ կարոտը, որպես է՛գ մի հովազ, —
 Ու ծեզին իմ սիրտը հողմածեծ
 Անապա՛տ էր արդեն գորշավազ:

XXII

Անապատ էր արդեն գորշ ու շոգ
 Իմ հոգին՝ տապ ու մթին,
 Ուր անբավ կարոտը ճնշող
 Հղանում էր տենդեր անմեկին:
 Կախված էր իմ գլխին կարծես
 Անշարժ ու շոգ մի արև—
 Ու ծարավ արշավում էր ես
 Գաշտերում անշուր—մոխիրե...

XXIII

Ու թվում էր, թե նորի՛ց, նորի՛ց
 Ահա ես՝ խոլ մի խաշակիր—
 Թռչում եմ դաշտերով մոխիրե՛՛
 Ժանգոտած զրահներ հագիս:
 Արշավում եմ անխոնջ ու ծարավ
 Ու նորից եռանդ եմ ու վազք,—
 Գաշտերով տոթ, գորշավազ
 Արշավո՛ւմ եմ դեպի Դամասկ:

XXIV

Այն գիշերը ուշ լուսացավ,
 Այն գիշերը տեեց մի դար:
 Այն գիշերը անթի՛վ անգամ
 Ես Կարմիր Քաղաքը մտա:

Այն գիշերը խեղդամահ արի
Իմ սրտում հազա՛ր սարացին,—
Եվ նայում էին ինձ խավարից
Այն կույսերը հուր-հրածին...

XXV

Առավոտը, մռայլ, բացվեց:
Գուրսը մութ էր, մրրիկ ու քամի:
Գլխիկոր՝ դեռ նստած էի ես՝
Կոթնած կլոր սեղանին:
Իմ սրտում անապատ էր արդեն,
Իմ սրտում կեսօ՛ր էր արդեն շոգ—
Երբ դղյակը դանդաղ զարթնեց.
Հսեցի հեռու մի շշուկ:

XXVI

Ու վագրի նման վիրավոր
Ցատկեցի իսկույն ես տեղից՝
Ու թռա անհուն ծարավով,
Ինչպես նետ՝ պոկված աղեղից:
Ու իջա ես դղյակի
Ներքնահարկը մռայլ ու մութ.
Ու խեղդում էր արդեն իմ հոգին՝
Մի կարոտ՝ համր ու անգութ:

XXVII

Եվ ահա աչքերով բոցակեզ
Ու սրտի վագրային խանդով—
Ես տեսա՝ դանդաղ այնպես,
Հուռ, գնում էր Ալֆոնս Անդոն:
Ու նրա քայլերին դանդաղ
Հետևում էին հեզանազ,
Օրորուն քայլերով խանդոտ—
Այն կույսերը փայլ ու երազ...

XXVIII

Ես նայում էի անկյունից:
 Հեռանում էին համրաքայլ...
 Ու թվաց, թե հո՛ւր մի գինի
 Լցվում է սիրտս ազահ:
 Եվ ահա ես տեսա, որ թեթև
 Այն կույսերը հուր-գեղանի
 Ծերունի ասպետի ետևից
 Հեզանազ, մտան բաղանիք...

XXIX

Մի առյուծ էր, որ—իմ սրտում
 Վիրավոր՝ խոլ մոնչաց:
 Իմ հոգում փոթորիկ էր պայթում.
 Ճարճատում էր մրրիկ մի շար:
 Ես կանգնել էի քարացած,
 Ես զգում էի, որ հիմա
 Կծալվեն ոտքերս հանկարծ
 Հողմածեծ շամբերի նման:

XXX

Եվ ես էլ շիմացա—ինչպես
 Հաջորդ վայրկյանին, խանդոտ—
 Քարացել էի արդեն ես
 Այն մռայլ, այն մութ դռան մոտ:
 Եվ զգում էի ես միայն
 Մի կարոտ՝ հուր-խելագար,
 Որ մի էգ բորենու նման
 Ուտում էր սիրտս ազահ:

XXXI

Ես կանգնել էի դռան մոտ,
 Բայց տեսնում էի արդեն ես
 Մարմինները նրանց խանդոտ,
 Մարմինները լույս ու հրկեզ:

Եվ տեսնում էի, որ մուսլ
Մերունու անկար խանդով
Հրեղեն մարմինները նրանց
Չարչարո՞ւմ է Ալֆոնս Անդոն...

XXXII

Ես տեսնում էի կույսերի
Մարմինները՝ երկու ա՛լ-կրակ,
Որ ծերի մութ գիշերին
Գալարվում էին ավվան:
Ես տեսնում էի ծերունու
Մարմինը՝ շոր-հողագույն.
Մի ճիվա՛ղ էր սև-լրբենի,
Մի կարիճ էր Ալֆոնս Անդոն...

XXXIII

Ու փարվել էր Ալֆոնս Անդոն
Գալարուն ու տոթ կույսերին,
Ու խմում էր անհագ եռանդով
Քրտինքները նրանց ուսերի:
Քրտնքոտ ծնկներին էր փարում,
Չեոքերով մարում էր երկու բոց,
Գրկում էր մեջքերը գալարուն,
Փարվում էր՝ շար ու անթով:

XXXIV

.
.
.
.
.
.
.
.
.
.

XXXV

Ես տեսնում էի մշուշում
 Տարփանքով վառվող երկու բոց
 Երկուսի մեջտեղում— ծեր մի շուն...
 Ու լալիս էր հոգիս հողմակոծ:
 Որպես հուր երկու ծապավեն,
 Երկու օձ՝ սպիտակ ու սև—
 Մերունու մարմինը փաթաթել,
 Գալարվում էին օձաձև:

XXXVI

Ես նայում էի հուսահատ
 Ու ճշում էր հոգիս խանդից
 Եվ ուզում էր հոգիս—նզովված
 Տիեզերքն ու կյանքը քանդի:
 Կուտակվում էր կրծքում իմ տոշոր,
 Ահռելի ու սև մի սամոմ,—
 Ես արդեն—մի վա՛զր էի շար,
 Փոթորի՛կ էի ես անհուն:

XXXVII

Ես կարող էի բյուրավոր
 Ոստիաներ խեղդել, հոշոտել,—
 Հորդահոս արյան ծարավով
 Արնահամ դիակներ ուտել:
 Որպես շար, արնախում բորենի
 Ես կարող էի սի՛րտը հանել—
 Քե ընկած լինեիր ծերունին
 Իմ ճանկերը պիրկ ու անել:

XXXVIII

Բայց կանգնել էի ես քարացած
 Ու խղճուկ էի, որպես շուն:
 Հսկում էր ներսից երգի ձայն,
 Ու պարում էին մշուշում:

Ու պարում էին երկու հուր,
Երկու բոց՝ սպիտակ ու սև—
Ու փարվում էին ծերունուն
Գալարքով խո՛ւ-օձաձև...

XXXIX

Պայթե՛ց փոթորիկը գլխիս
Եվ սիրտս ահեղ մոնչաց:
Մրրիկի պես շաշով մտա ներս,
Քորենու պես ագա՛հ ու շար:
Ու իջավ տեղս երկաթե
Նրա շոր կրժքին ծերուկ,—
Ու հաջորդ վայրկյանին արդեն
Թավալվում էր նա ա՛լ լճերում:

XL

Ու լցվեց բաղանիքը հանկարծ
Կանացի սուր ճիչերով:
Զգացի, որ կրժքիս ընկան,
Բռնեցին ինձ երկու ուրու:
Երկու բոց՝ սպիտակ ու սև,
Երկու հուր հրեշներ է՛գ.
Երկու շար ոսոխներ օձաձև,
Երկու խոլ շարքե՛ր հուսաբեկ:

XLI

Ու վայում էին կատաղի,
Ու ծեծում էին ինձ նրանք:
Նրանց դեմքը դարձել էր դեղին
Ու հայացքը՝ օձ ալվլան:
Այդ վայրկյանը հուր-արյունի
Զառանցանք էր՝ խո՛ւ միստերի.
Ու հոսում էր ալ մի գինի
Դեպի սիրտս նրանց զիստերից...

XLII

Ճանկութեամ էին նրանք ինձ,
 Գաղազած՝ ձեռքերս կծում,
 Ու թքում էին դեմքիս
 Վահրով՝ դառն ու կծու:
 Ու լուսե մատներով շարկամ
 Իմ աչքերն էին փորփրում:
 Օ, մահու քաղցր վայրկյան,
 Օ, նղմվք, անեծք, աններում:

XLIII

Զառանցանք էր, տենդ էր թվում
 Այդ վրեժը շար էգերի:
 Ու տրվել էի ես հլու
 Նրանց շար, տանջող կամքերին:
 Ու խփում էին երեսիս
 Նրանք հուր-թեթև ոտքերով:
 Ու անհույս, սև մի կակիծ
 Էջվում էր սիրտս խոռով...

XLIV

Եվ հանկարծ թողեցին նրանք ինձ
 Ու հասան մեռած ծերուկին:
 Կախվեցին նրա շոր դեմքից,
 Փարվեցին կրկի՛ն, կրկի՛ն:
 Ու ներկում էր արյունը նրա սև,
 Մերունու արյունը մութ—
 Մարմինները նրանց լուսե,
 Մարմինները՝ դառն ու անգութ:

XLV

Համբուրում էին ծերուկի
 Սպիտակ շրթերը նրանք:
 Ու ճշում էին դառնազին,
 Ու կանչում էին—նրան:

Ու սրբում էին վերքի
Արյունը մազերով իրենց սև:—
Ու ընկած էի ես մեղքիս՝
Մերժված, խեղճ ու անսեր...

XLVI

Ո՛վ երկինք, պայթի՛ր գլխիս,
Փոթորի՛կ, մազերիս տեղա՛.
Տատասկնե՛ր թող բացվեն ճամփիս,
Կայծակնե՛ր գլխիս թող շողան:
Կուրանա՛ն թող աչքերն իմ դաժան,
Չորանա՛ թող ձե՛ռքը իմ չար,
Թող գգվի ինձ մա՛հ տարածամ,
Թող հոգիս դժոխքո՛ւմ ճշա...

XLVII

Ինձ գցին բանտը դղյակի,
Ինձ համար սուսեր սրեցին:
Բայց էլի լիքն էր հոգիս
Այն սիրով հուր-հրածին:
Ու մռայլ բանտից ես փախա,
Որ կյանքի գո՛րշ ճամփեքին
Երգեմ իմ այս սե՛րն արնահամ
Ու հատու հարվածը իմ տեղի:

XLVIII

Չուղեցի մեռնել բանտում
Ու թաղել սերս անհետ:
Ուղեցի լինել տրուբադուր,
Դղյակից-դղյակ թափառել:
Ուղեցի, որ լուռ շմնա,
Չմարի սիրտս հրկեղ,—
Ուղեցի ապրե՛լ մշտական,
Որ նրանց գովքը երգեմ:

XLIX

Երկու լույս էին վառ նրանք,
 Երկու բոց՝ սպիտակ ու սև,
 Երկու խոլ արև հուրհուրան,
 Երկու հուր-հրաշքենք լուսե:
 Մեկի բոյը—սեղ մինարեթ,
 Մյուսինը—սև մի սոսի.
 Մեկը—վառ, անմար մի արև,
 Մեկը—կաթ, արծաթ մի լուսին:

L

Բեղվինի խարույկներ էին խոլ
 Սևամած աչքերը մեկի,
 Մյուսի աչքերը—տխուր
 Միրաժնե՛ր էին անմեկին:
 Մեկի կուրծքը մզկի՛թ էր սպիտակ,
 Մյուսինը—սե՛ղ մի տաճար,
 Մեկը—բիլ գազե՛լ էր կապուտաչ,
 Մեկը—հուր-նժո՛ւյզ սևաչյա:

LI

Մեկը թիռ քայլում էր թեթև,
 Թռչկոտում էր, որպես բիլ գազել.
 Մյուսի քայլքն՝ հրաթև—
 Թռիչք էր դաշտերում ավազել:
 Աշխարհում դեռ չի՛ երազել
 Նման բախտ և ո՛չ մի արքա,
 Բայց այդ վառ բախտին տիրացել,
 Տիրացե՛լ էր Անդոն շարկամ...

LII

Ես կարող էի նրանց հետ
 Աստծու գահին տիրանալ,
 Դամասկի վրա հարձակվել
 Մեն-մենակ՝ հա՛ղթ ու անահ:

Ես կարող էի, որպէս շուն,
Հավիտյան նրանց ո՛տքը լիզել.—
Օ, նրանց ոտքերի՛ փոշում
Ինձ համար դրա՛խտ էր լուսե:

LIII

Բայց ահա— հոգնած մի տրուբադուր,
Օրերի գորշ ճամփեքին
Երգում եմ հարվածը հատու,
Մահացու հարվածը իմ տեգի:
Երգում եմ նրանց երգը լուսե,
Մարմինները նրանց ա՛լ-կրակ,
Երգում եմ սե՛րը նրանց սև
Ու վերքիս արյո՛ւնն արվլան:

LIV

Երգում եմ կարոտն իմ արթուն,
Երգում եմ ամո՛թը այն սև,
Որ կարող է դարձնել մարդուն
Գետնահար ստվեր մի նսեմ:
Ուխտավո՛ր, լսի՛ր հիմա դու,
Աշխարհի գո՛րշ ճամփեքին
Երգում է հե՛ք մի տրուբադուր
Մահացու հարվա՛ծը իր տեգի...»: